

**ԹԵԹԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ
ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱ**

ՀՏԴ 685.34.03


Ա.Ս. ՄԻՒԹԱՐՅԱՆ, Ա.Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Ն.Գ. ԿՅՈՒՐԵՂՅԱՆ

**ԻՆՈՎԱՑԻՈՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԿԱՆԱՑԻ
ՎԵՐՆԱՀԱԳՈՒՍՏԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(Գյումրի)**

Ներկայացվում են նորոյթ հանդիսացող այդ արտադրատեսակ, արտադրատեսակի արտադրության համար ընտրված գործվածք, գործվածքի յուրահատկությունները, արտադրատեսակի ձևավորման համար անհրաժեշտ տեխնոլոգիական անցումները:

Առանցքային բաղադրանք. ինովացիա, նորոյթ, Parameta-S երկշերտանի գործվածք, կիսավերարկու, ջրամետ, ջրամերժ, հանգույցների մշակում, տեխնոլոգիական անցումներ:

Ներկայացվել է մեր կողմից նոր արտադրատեսակի՝ կիսավերարկուի (Ֆրենչ) արտադրության տեխնոլոգիայի կազմակերպումը (նկ. 1):



Նկ. 1. Վերնահագուստի ձևավորման տեխնոլոգիական անցումների հերթականությունը և անհրաժեշտ մեքենասարքավորումների կազմը

Կիսավերարկուն կարելու համար ընտրվել է Parameta-S երկշերտանի գործվածքը Paramo ֆիրմայից: Գործվածքն առանձնահատուկ է իր հատկանիշներով. այն, կախված եղանակային պայմաններից, արձակում կամ կլանում է ջերմություն: Այսինքն՝ այս գործվածքից կարված իրը կարելի է կրել շոգ եղանակին և պաշտպանվել շոգից, իսկ ցուրտ եղանակին զգալ հարմարավետ և չմրսել (նկ. 2):



Նկ. 2. Կիսավերարկու (ֆրենչ) հագուստի հանգույցները
 1- Թևքի մշակում, 2- Կոճկամասի մշակում, 3- Պարանոցի մշակում, 4- Գրպանի մշակում
 5- Ներքևի եզրի մշակում

Այս հնարավորությունները ընձեռվում են՝ շնորհիվ ընտրված գործվածքի մի կողմից՝ ջրամետ, մյուս կողմից՝ ջրամերժ հատկությունների: Հագուստին բարեձև տեսք է տալիս ֆլիսը (միկրոֆիբրի ծածկույթ), որը նման է փափուկ թավշամահուդի: Քանի որ գործվածքն օժտված է ջրամերժ հատկություններով, այն տաք եղանակին մաշկից հեռացնում է խոնավությունը (այս դեպքում ֆլիսը ևս կմնա չոր), իսկ ցուրտ եղանակին ապահովում մարմնի համար անհրաժեշտ ջերմաստիճան:

Հետազոտության արդյունքները: Նախագծվել է ուղիղ ուրվագծով կանացի կիսավերարկու (ֆրենչ)՝ Parameta-S նյութից: Այն կարելի է կրել երեկոյան հավաքույթների, ինչպես նաև սպորտային վարժանքների ժամանակ:

Քանի որ Parameta-S նյութն ունի իրեն բնորոշ հատկությունները (ջրամետ, ջրամերժ), ուստի այս փաստն օգտագործված է ներկայացված նմուշի համար և ունի հետևյալ կառուցվածքային առանձնահատկությունները՝ շիտակ երեսից թավշամահուդատիպ կողմը նախատեսված է երեկոյան կիսավերարկուի համար և ունի պարանոցի և թևքերի հատվածներում կոճկելու միջոց՝ մագնիսական ամրակ: Պարանոցը և լանջափեշատակը մշակված են նույն թավշամահուդե կողմով, որը ծավված վիճակում հակառակ կողմում ձևավորվում է բազկակալ և տալիս է գեղազարդային տեսք:

Արտադրատեսակի ձևավորման համար օգտագործվել են սինթետիկ թելեր՝ լավսանե և կապրոնե.

Լավսանե թելեր՝

$$7 = 11,1 \cdot 2 \left(N^{\circ} \frac{90}{2} \right); 7 = 11,1 \text{ տեքս} \cdot 3 \left(N^{\circ} \frac{90}{3} \right);$$

Կապրոնե թելեր՝

$$7 = 5 \text{ տեքստ} \cdot 3 \left(N^{\circ} \frac{200}{3} \right); 7 = 15,6 \text{ տեքստ} \cdot 2 \left(N^{\circ} \frac{64}{2} \right); 7 = 15,6 \text{ տեքստ} \cdot 2 \left(N^{\circ} \frac{64}{3} \right):$$

Մասնիկների նախնական մշակման համար օգտագործվել են DMN-5420-6, DMN-5420-4, DLN-5410-6, DLN-5410, DLU-5490, DLU5490-4/DLU-5490-6, DDL-5550-4, DDL-5550-6 մակնիշի մեքենասարքավորումներ: Մշակումից հետո մասնիկները միացվել են Ջուկի ապրանքանիշի DDL-5600N-7 կարի մեքենայի միջոցով[4]:

Եզրակացություն: Ջրամերժ և ջրամետ հատկություններով օժտված Parameta-S երկշերտանի գործվածքը հնարավորություն է տալիս արտադրել կանացի կիսավերարկու, որը հարմարավետ է կրել եղանակային տարբեր պայմանների դեպքում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Մելքումյան Մ.** Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում. Ուսումնական ձեռնարկ.- Եր.: Զանգակ, 2014.- 512 էջ:
2. **Բաղանյան Լ.** Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ. Դասագիրք.- Եր.: Զանգակ, 2007.- 664 էջ:
3. **Պողոսյան Ա., Սարգսյան Ա., Հակոբյան Մ.** Կարի արտադրության տեխնոլոգիա. - Եր.: Տիգրան Մեծ, 2012. - 168 էջ:
4. **Московцев С.В., Кирюхин С.М., Горшкова С.С.** Исследование гидрофобности тканей. - М.: Технология текстильной промышленности, 2010. – 325 с.

С.С. МХИТАРЯН, С.М. ОГАННЕСЯН, Н.Г. КЮРЕГЯН

ПРИМЕНЕНИЕ ИННОВАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В ПРОИЗВОДСТВЕ ЖЕНСКОЙ ВЕРХНЕЙ ОДЕЖДЫ

Представлены новизна в ассортименте одежды, выбранная ткань для производства этого ассортимента, особенности ткани, основные технологические переходы при ее производстве.

Ключевые слова: инновация, новизна, двуслойная ткань Parameta-S, полупальто, гидрофильный, гидрофобный, обработка узлов, технологические переходы.

S.S. MKHITARYAN, S.M. HOVHANNISYAN, N.G. KYUREGHYAN

**APPLYING INNOVATIVE TECHNOLOGIES IN THE PRODUCTION OF
WOMEN'S OUTWEAR**

The novelty in the clothes assortment, the selected fabric for manufacturing that assortment, the fabric features, the main technological transitions during its production.

Keywords: innovation, novelty, Parameta-S double-layer fabric, coats, hydrophilic, hydrophobic, node processing, and technological transitions.

ՀՏԴ 677.021

Ս.Ա. ԿՅՈՒՐԵԴՅԱՆ, Լ.Ա. ՎԱՀՐԱԴՅԱՆ

**ԲԱՐՁՐ ԶԵՐՄԱՍՏԻՃԱՆԱՅԻՆ ԴԱՇՏԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒՄԸ
ՄԱՐԴՈՒ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆԻՉ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎՐԱ
(Գյումրի)**

Առաջարկվել է հատուկ մեթոդ, որը կարող է օգտագործվել ջերմային բարձր ուժ-գնությամբ խոցող գործոններից մարդու մաշկի անհատական պաշտպանության միջոցների գործիքային եղանակի ստեղծման համար: Ենթակոստյումային տարածությունում ջերմային դաշտի որոշման համար օգտագործում են մաշկի ջերմաֆիզիկական կերպափոխիչների մանեկենային համակարգ: Նկարագրված մեթոդը թույլ է տալիս կրճատել նյութական ծախսերը և հավաստիության բարձր ճշտությամբ որոշել պաշտպանիչ հագուստի ջերմապաշտպանիչ հատկությունները:

Առանցքային բառեր. անհատական պաշտպանության միջոցների հավաքածու (ԱՊՄՀ), ջերմային խոցող գործոն (ՋԽԳ), ջերմապաշտպանիչ հատկություն (ՋՊՀ), ջերմաֆիզիկական կերպափոխիչ (ՋՖԿ):

Ներածություն: Հայտնի են ԱՊՄՀ-ի ջերմային հատկությունների որոշման եղանակներ՝ մարդու մաշկի և մարմնի ջերմաֆիզիկական կերպափոխիչների (ՋՖԿ) մանեկենային համակարգի օգտագործման ճանապարհով, ընդ որում, մարդու մարմնի և մաշկի մակերևույթների վրա տեղադրվում են ջերմաստիճանային տվիչներ, որոնց մեծություններով կարելի է դատել մարդու մաշկի ջերմային խոցման մասին: Ներկայացված մեթոդին տեխնիկապես մոտ է ջերմապաշտպանիչ հատկությունների (ՋՊՀ) որոշման մեթոդը, որը հիմնված է մանեկենային համակարգի ՋՖԿ-ի կիրառման վրա:

Մանեկենային համակարգի կիրառումը կապված է բազմաթիվ խնդիրների հետ: Այսպես, նմուշների ջերմապաշտպանիչ բնութագրերի վրա տարբեր